ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 62-Ա/2 **«__17__» հունվարի 2024 թ.**

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ «1162 ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ» «11007 ԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԳԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ՝ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշման 6-րդ կետի 1)-ին ենթակետի «ա» պարբերությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20)-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «1162 Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրի» «11007 Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակում» միջոցառման գծով նախատեսված հատկացումների բաշխումը՝ ըստ առանձին հրատարակումների՝ համաձայն հավելվածի:

2. Հաստատված հավելվածը հրապարակել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնական կայքում:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՆԱԽԱՐԱՐ՝ **ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2024 թվականի հունվարի 17-ի N 62-Ա/2 հրամանի

«Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «1162 գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրի» «11007 գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակում» միջոցառման գծով նախատեսված հատկացումների բաշխումը՝ ըստ առանձին հրատարակումների		
Ծախսային ծրագիրը կատարող ՀՀ պետական կառավարման մարմինների, պետական աջակցություն ստացող իրավաբանական անձ հանդիսացող սուբյեկտների և հրատարակումների անվանումները		Գումարը (հազար դրամ)
1		2
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն		95556.3
«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա» ՈԱԿ		95556.3
այդ թվում՝		
1	«Պատմաբանասիրական հանդես» (ամսագիր)	12860.0
2	«Լրաբեր հասարակական գիտությունների» (ամսագիր)	10990.0
3	«Հայաստանի քիմիական հանդես» (ամսագիր)	4700.0
4	«Հայաստանի բժշկագիտություն» (ամսագիր)	4452.0
5	«Ֆիզիկա» (ՀՀ ԳԱԱ տեղեկագիր)	3440.0
6	«ՀՀ ԳԱԱ Զեկույցներ» (ամսագիր)	5080.0
7	«Հայաստանի կենսաբանական հանդես» (ամսագիր)	4585.0
8	«Աստղաֆիզիկա» (ամսագիր)	5405.0
9	«Մաթեմատիկա» (ՀՀ ԳԱԱ տեղեկագիր)	3580.0
10	«Մեխանիկա» (ՀՀ ԳԱԱ տեղեկագիր)	3270.0
11	«Տեղեկագիր. Տեխնիկական գիտությունների սերիա» (ամսագիր)	3558.9
12	«Գիտություններ երկրի մասին» (ՀՀ ԳԱԱ տեղեկագիր)	3480.0
13	«Նեյրոքիմիա» (ամսագիր)	4520.0
14	«Գիտության աշխարհում» (ամսագիր)	10250.0
15	«ՀՀ ԳԱԱ Բնական գիտություն» (էլեկտրոնային ամսագիր)	3655.4
16	«Հայկական Մաթեմատիկական հանդես» (էլեկտրոնային ամսագիր)	3850.0
17	«Հայաստանի Ֆիզիկա» (էլեկտրոնային ամսագիր)	3560.0
18	Մենագրություններ	4320.0